

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՏԵՍՈՒՋ ՓԱՐԻՁԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Փարիզ...: Ի՞նչպէս կրնայ հնչել այս անունը Ալիշանի ականջին...: Ինչպէս ալ հնչելու ըլլայ՝ պէտք է ելլէ ճամբայ:

Հ. Ղ. Ալիշան երրորդ անգամն է որ Վենետիկէն կը մեկնի Փարիզ. առաջին երկու անգամները գիտէր որ անցողակի ու կարճ ժամանակի մը համար կը հանդիպէր լոյսերու քաղաքը. այս երրորդ երթը մնայուն է, ու չի ալ գիտեր թէ ո՞րքան պիտի երկարի նոր առաքելութիւնը:

Փարիզ...: «Ով գիտէ ի՞նչ ուրախութեամբ կը փութայ Ալիշան այդ երջանիկ աշխարհը, զարդացումի եւ լուսաւորութեան քաղաքը»: Այս ըլլայ գուցէ ընթերցողին առաջին մտածումը: Ալիշան Փարիզ հասնելէն տասը օր ետք կը գրէ. «տեսի եւ սակաւ մի եւ զԲարիզ, եւ արդարեւ այլափոխեալ երեւեցաւ ինձ, ընդարձակեալ, պայծառացեալ, սպիտակացեալ, շոյլեալ, խոնեալ երթեւեկօք ճոխազարդ կառաց եւ երկվարաց յոյժ յոյժ, եւ յաւելաւ յիս տենչ միայնութեան»¹: Միայնութեան տենչը անկարելի է մարել Ալիշանի մէջէն. հոն՝ անտեղիտալի է, մանաւանդ թէ յաջորդաբար ստէպ կը դառնայ նոյն նիւթին, եւ երբ Վենետիկէն իր սիրելի եւ մտերիմ դասընկերը, Հ. Աբրահամ Ճարեան, կատակախառն կը գրէ իրեն՝ «երանի» տալով ձեռք ձեռք բախտին, «նախանձեալ ես ընդ ճանապարհորդութիւնս, կը պատասխանէ անոր, ես միշտ նախանձեմ ընդ կաց եւ մնաց վիճակի ոմանց ի խորչս մենաստանիս, որոյ անդորրութիւն առաւել զգալի լինի ի հեռանալն անտի»²:

Այսպէս կամ այնպէս՝ պէտք է համակերպիլ, ոչ լոկ միայնութեան, հոգեկան կղզիացումին, այլ նաեւ սիրելիներու բացակայութեան, իր սիրելի աշակերտներու չգոյութեան, նոր միջավայրի եւ

1. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:
2. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 7 Յունիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

չըջանակի, ինչ որ խորապէս կ'ազդէր զգայուն եւ դիւրագոյաց Ալիշանի վրայ: Բաւական է կարգալ դրած նամակներուն ողջունագրութեան մասը, տեսնելու թէ որքան մաքուր սիրով կ'ապուած է իր սիրելիներուն. «մատո՛ւ եւ զողջոյնս իմ եւ առաւել քան զողջոյնս առ (...) Հ. Ղուկայ, Հ. Ստեփանեայ, եւ ամենեցուն յականջ յանուանէ...»: Ի՞նչպէս մոռնալ Բաղրատունին՝ «քերդողապետն իմ, զոր եւ ողջունեմ ովկիանոսաչափ, որպէսզի եւ ինքն տեղացէ ի վերայ իմ զերկինս՝ զարդուքն եւ Հայկիւն հանդերձ»³: Երբ Վենետիկէն՝ երկա՛ր երկա՛ր սպասած էր Հ. Ներսէս Սարգիսեանին, Հայաստանի տասնամեայ առաքեալի դարձին, եւ առանց բախտն ունենալու համբուրելու հայրենիքի փոշիով օծուն Սարգիսեանի մօրուքը, հեռացած էր Վենետիկէն. «գարձեալ ողջոյն եւ բազում անգամ ողջոյն սիրելեաց իմոց եւ մերձաւորաց, ընդ որս եւ պապա Հօր մերոյ Ներսիսի, որ ի հարկէ յաւուրս յայտոսիկ գտցի ալդը»⁴:

* * *

Վենետիկէն դէպի Փարիզ ճամբորդութիւնը հաճելի կ'անցնի: Ինը գուարթ օրեր (10-19 Մայիս 1858) կը թափառի Իտալիոյ եւ Գերմանիոյ քաղաքները, անցնելով մայիսեան ծաղիկներու մէջէն, ճաշակելով բնութեան գեղեցկութիւնները, եւ ամէն տեղ հետապնդելով հայրենի յիշատակներ կամ ձեռագիրներ: Քաղաքներու տեսարժան վայրերը գոնէ պահ մը «հեռացուցանէին ի մէջ զտխրականս ինչ յիշատակս»⁵: Մանր էր արդարեւ բաժանումը իր սիրելիներէն: Օրութեան փոքրիկ տետրակի մը երկու էջերը վերապահուած են այս գրութեան փոքրիկ տետրակի մը երկու էջերը. «1858 Մայիս 10. յառաւօտուն ուղեւորութեան, ուր կը կարդանք. «1858 Մայիս 10. յառաւօտուն անջատումն ի Վ. Հ. Աբրահամէ... անջատումն յաշակերտացս եւ ի Հարց»: Քանի մը տարի առաջ, երբ շարթուան մը համար միայն կը մեկնէր Վենետիկէն Հռոմ, չկարենալով զսպել յուզումը՝ զգացումները յանձնած էր տետրակին. իսկ հիմա, որ ուղղուած էր Փարիզ, առանց գիտնալու դարձի թուականը, ի՞նչ զգացումներ կրնային պատել Ալիշանի հոգին: Տարբեր պիտի չըլլայ 1850 Սեպտ. 1ին արձատել Վենետիկէն, որուն մէկ հատուածը կ'ուզենք հոս նազրած տպաւորութիւններէն, որոնք մէկ հատուածը կ'ուզենք հոս արձանագրել, իբր պատկերներ կայ զգացումներուն. «Սեպտ. 1-2 ի հասարակ գիշերի, ի մուտս Նաւասարդի Ժ. դարու Հայկազեան տումարիս, այն է ի ՌՅ Թիւ, սկիզբն ճանապարհորդութեան իմոյ ի Վենետիկոյ ընդ Թրեստ եւ ընդ Անքոնա շոգեհաւու, եւ անտի ընդ

3. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:
4. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 7 Յունիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:
5. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

ցամաքի Հոռոմ: Սիրտ հերձակտուր քամէր տակաւին ղկաթիլս արեանիչ ցօղոյ յինքն ի ներքս, ընդ անջատումն ի դասուէ մանկանց, զորս 6 ամ. իբրեւ աշակերտս եւ ամիսս 26 դպրէր իբրեւ որդիս հոգեհարազատս: Քանի տարանման պատահումնք ի միում պահու: Անջատումն ի սիրելեաց որպիսիք չեւ էին ինձ եղեալ սիրելիք՝ յամենայն կեանս իմ: Ո՛հ, եթէ բուռն է սէր իբրեւ դմահ, հասարակաբար վկայեալ, բռնազոյն է սէր հոգեխառն՝ քան զամենայն սէր: Աստուածութիւն ինքն պարզապէս հանգոյց է աստ ընդ սիրտս, եւ զի՞ հոգորազոյն քան զայս կապ (...): Հնչեաց ժամն որ 18 ամ եւ առաւել յեղափոխէր յինչն, եւ յերկրորդ հայրենեաց իմոց, յոր զերիս մասն ի հնգից կենաց իմոց անցուցեալ էր իմ, վարէր զիս յօտար ալիս եւ ի քաղաքս հեռաւորս (...): Երթայր եւ մեկնէր նաւն, նաեւ ճեպ զճեպի երազէր ի գնացս, եւ զգացուցանէր ինձ անողոր զհարկ եւ զանհրաժեշտ դառնութիւն անջատման: Բուռն էր անջատումն, դահիճ շտապէր: Յայնժամ ասաց սիրտն իմ թէ ոչ տեսցես զմասունս քո ցմեծ ժամանակ, գուցէ եւ ոչ եւս: Եւ սառնութիւն իմն սարսուիչ ընկճէր գնա (...): Ողջամբ մնայ Վենետիկ, ողջամբ մնայ քաղաք անզուգական, ողջամբ մնայ երկրորդ իմ հայրենիք: Ողջամբ մնայ կղզեակ Վենետիկոյ Ս. Ղազար, Մխիթարեանդ օթեւան, ընդունող մանկութեան իմոյ եւ դայեակ եւ մարդիչ ամս 9: Ողջամբ մնայ եւ դու հոյակապդ պալատ Պեղարեան ի Ռափայէլեան վարժարան, որ այլ եւս 9 ամ ասպնջականդ եղեր ինձ: Ողջամբ մնայք սենեակը տրիւրալիք (մեծամեծաց ճեմարան, որ զփոքրս տարայք), ուրանօր նայնքան կիրս կրեցի եւ այնքան դիր ի քարտն արձանացուցի: Ողջամբ մնայք ով դադարք լոնցեալք, ուրանօր տառապեցայ ի մանկութեան համազդեացս համասեռից եւ սիրեցի զնոյնս (...): Ո՛հ, ողջոյն ընդ ձեզ, ողջամբ մնայք ինձ սիրունք դուք, աշակերտք եւ որդեակք ի Տէր: Ողջամբ մնայք որք ի պահուս սիրելիք յետ Աստուծոյ...: Ես ելեալ զատայ ի ձէնջ, եւ ո՛ր գիտիցէ ե՞րբ այլ տեսցուք զիրեար ի միասին...: Կարծեմ թէ յայսմ վայրկեանէ եւ առ յապա մինչեւ ի ժողովարանն հանուրց ի դատաստանն մեծ, ո՛չ եւս համազումար տեսցուք մեք զիրեար յաւիտեան (...):»⁶:

Ուղեւորութեան ընթացքին հանդիպած քաղաքներէն յիշենք մէկ անին, որոնք յատկանշական մանրամասնութիւն մը ունին Ալիշանի չեանքին նկատմամբ, եւ կամ յատուկ տպաւորութիւն մը թողած են իր վրայ: Պոլսանոյ մէջ Ալիշանի կը մօտենայ «պատանեակ մի ի կոմսից Թուն, աղնուակերպ, ետ գրել ինձ զանունս յալպոմ իւր, ընդ աւուրց ծննդեան իմոյ»⁶: Այդ պատանի կոմսը ի՞նչպէս գուշակած էր թէ իր դիմացինը Հայոց Նահապետն էր...: Անցնելով Պրեննբուրգ,

6. Օրագրութիւն Ալիշանի (անտիպ):

Ջրվէժի մը առջեւ կանգնած կը յիշէ Ռափայէլեան վարժարանի իր սրտի հատորներ՝ աշակերտները մի առ մի, անունով եւ մականունով, եւ «նստեալ գրեցի զանունս աշակերտացս»⁷:

Մայիս 14ի առաւօտը կը հասնի ինսպրուկ, ուր կը մնայ քանի մը ժամ միայն. կը գտնէ ծանօթ վարդապետ մը՝ Փեթեր անունով, «այր աղնիւ... ընկերեաց մեզ, արար զոր կարէնն եւ աւելի եւս առնել կամէր»⁸:

Երկու օր կը մնայ Միւնիխ, կ'իջեւանի Բենեդիկտեաններու վանքը, որու արքահայրն էր նշանաւոր պատմաբան Հաննեսլերկ, «հմուտ արաբիկ եւ պարսիկ բարբառոց, չափաւորապէս եւ թուրքարէնին, զոր եւ ըզձայր լիովին ուսանել, եւ ես հրաւիրեցի երթալ ի Վենետիկ»⁹: Նոյն քաղաքին մէջ կը գտնէ հայազէտ գերմանացի վարդապետը Վինտշման, որու հետ «յերկար խօսեցաք ըստ մերոց ախորժակաց»¹⁰, եւ «ընծայեցի նմա օրինակ մի նուագացս»¹¹: Կ'այցելէ քաղաքին պետական գրատունը, կը քննէ հայկական ձեռագիրները եւ երկու տպագիր հատորներ «Զոհրապայ դադափարն եւ մասն Հայկազեան բառարանին, Մ-Վ տառք, զորոց նշանակեցի զինչն ըստ խընդրոց գրապետին»¹²: Ապա յաջորդաբար կը շրջի «հին եւ նոր պատկերատունը (բինագոդէքա), արձանատունս. յերեկոյի՝ կառօք ի նիմֆէպուրկ, յարքունի դղեակ, շատրուանք եւ լիճք, Մազդադեանց լոյն մատուռն հնակերպ, յորում եւ գլուխ մի մամուլի խառնեալ յանձաւակերպութիւնս, արծաթեայ խաչ մեծ Ե. դարու, որպէս ասէին: Երջեցաք եւ ի պալատն, ի սենեակ դշխոյին եւ թագաւորին, եւ ի ստորին յարկի ի դատիկոն Մաքսիմիլիանոս կայսեր, եւ ի սենեակին, յոր յանկարծամահ գտեալ է, եւ ամենայն կահք թողեալ են որպէս էինն յանմ ժամու (...): ի մտանել մեզ ի պարտէզն, ելանէր եւ արքայն Մաքսիմիլիանոս, երկձի կառօք միակ ընկերակցաւն, եւ ողջոյն ետ»¹³:

Կը հիանայ ու կը զմայլի քաղաքին գեղեցկութեան վրայ¹⁴, ու այդ ամէնը տեսնելէ ետք կրնա՞յ զսպել երեւակայութիւնը, կրնա՞յ չյիշել իր Հայաստանը, կրնա՞յ կապ մը չդնել երկու քաղաքներուն

7. Օրագրութիւն Ալիշանի:

8. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ Զարեան, Վենետիկ:

9. Անդ:

10. Անդ:

11. Օրագրութիւն Ալիշանի:

12. Անդ:

13. Անդ:

14. «Ի կարգի ճանապարհորդութեանց կամ ճանապարհատեսութեանց իմոց դիցես, եւ զտես հանգիստարանի ծաղկանց, զոր տեսի ի հանդիսարանին արուեստից, զբազմութիւն եւ զանազանութիւն աղանակուցից, ազալեայց, վարդաճառոց,

եւ աշխարհներուն միջեւ. «զի՞նչ ասել զգեղեցկութենէ հասարակաց շինուածոց քաղաքին եւ զճոխութենէ զարդուց եւ շքոյ թանգարանաց եւ անդրեաց. արդարեւ յիմարախառն իմաստնոյ թաղաւորի պիտոյ էր, առ ի ծախել բազմաթիւ միլիոնս եւ զհրաշալիս կառուցանել: Ընդ զարմանաց եւ նախանձ իմ զրգուէր յոգւոյ, զմերս յիշելով հիւսիսէն, մանաւանդ ի տեսանել զպղնձաձոյլ ամենահսկայ անդրին Պաւարիա, այսինքն պատկերն կամ ոգին հայրենեաց, ի վերայ վիմակոփ պատուանդանի կառուցեալ հեռագոյն հանդիպոյ մայրաքաղաքին պսակաբարձ ակն արկանելով ի նա, առ երի ունելով զառիւծն անհեղեղ, եւ յիշելով զի ոգիդ այդ Պաւառն է ի Հայաստան աշխարհէ զաղթեալ...»¹⁵:

Տեսիլի մը նման կը վերանայ ամէն բան եւ իրականութիւնը կը յաջորդէ երազին: 19 Մայիս 1858. երեկոյեան կը մտնէ Փարիզ, ու կէս մութի մէջ կը ներկայանայ Մուրատեան վարժարանի «մարախանման եւ կիկղոպակերպ» դռնապանին, հարցնելով թէ «իցէ՞ ժամանեալ միւսիւ Լէոն. ասէ՞ ոչ. ես ասեմ թէ՛ հասեալ է. նա պնդէր եւ վիճէր թէ՛ ոչ. մինչեւ ուրեմն ասաց. Մի՞ զուցէ թէ ինքն իցես»¹⁶: Լուրը կը տրուի վարժարանի վարդապետներուն, տեսուչ Հ. Ռափայէլ Թրեանցի, Հ. Սուքիաս Պարոնեանի, Հ. Քերովբէ Իֆրաղեանի. կը փոխանակուին սիրոյ ողջոյնները, կը յաջորդէ գիշերը:

Նոր անկիւնադարձ մը կը սկսի Ալիշանի կեանքին մէջ:

* * *

Ալիշանի Փարիզի մէջ անցուցած կեանքը կարելի է բաժնել զանազան հանգրուաններու: Առաջինը կը տեւէ Փարիզ ժամանումէն մինչեւ 9 Դեկտ. 1858, թուական մը՝ որ անջնջելի մնացած է Ալիշանի հոգիէն շատ երկար տարիներ: Կը մտնէ Մուրատեան վարժարան՝ ոչ իբր տեսուչ կամ մատակարար, այլ պարզապէս իբր դասատու մը, դաստիարակ մը աշակերտներուն, մինչ կեանքի պայմանները եւ պարագաները կոչած էին զինքը աւելի վեր, աւելի պատասխանատու պաշտօններու:

Ալիշան իր ամբողջ վանական կեանքի ընթացքին եղած էր միշտ հիացող մը Հ. Ռափայէլ Թրեանցի. 18 տարի անցուցած է միշտ պա-

մեծամեծ մանուշակաց եւն., զպտոց ոճանց, որք աստ երեւին եւ ի հեռուստ ողջունին: Այլ զի՞նչ օգուտ ասել տեսի, եւ ոչ տես: Նա մանաւանդ չիցէ՞ լաւ եւս ոչ զվարդ տեսանել եւ ոչ զփուշ շօշափելը. (Ալիշան Փարիզէն, 7 Յունիս 1858, առ Հ. Ա. Ճարեան, Վենետիկ):

15. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

16. Անդ:

հելով իր սիրոյ եւ մտերմութեան կապը անոր հետ. գոնէ այս ցոյց կու տան այն սակաւաթիւ նամակները՝ զոր փոխանակած են իրարու: Այսօր Ալիշան կը մտնէ Մուրատեան վարժարան իբր աջակից նոյն Հ. Ռափայէլին, առանց գիտնալու թէ քանի մը ամիս ետք ինքն իր ձեռքով պիտի փակէ անոր աչքերը, ստանձնելով տեսչութեան պաշտօնը:

Անցնինք տեսնելու պատմութիւնը, քննելու մանրամասնութիւններ, յստակելու համար Ալիշանի դէմքը:

Փարիզ հասնելէն քանի մը օր ետք, Ալիշան եւ Հ. Գրիգորիս Մերճանեան, որ իր հետ ժամանած էր Վենետիկէն, կը սկսին դասաւանդութիւնը «հաւասարեալ հնգեցուն եւս Հարցս յայս պաշտօնս»¹⁷: Առաջին երկու ամիսները կը նուիրէ քննելու վարժարանի կեանքը, կացութիւնը, ուսումնական ծրագիրը, առանց իջնելու մատակարարական եւ տնտեսական հարցերու մէջ. եւ ահա յանկարծ վարժարանի տեսուչը «տկար գոլով յաւուրս յայտնիկ, հրամանաւ բժշկին ստիպեցաւ յանկողին դադարել աւուրս ինչ»¹⁸: Ալիշան, որ վարժարան գտնուող չորս վարդապետներէն երկրորդն էր, 38 տարեկան, կը ջանայ զգալի չընել Հ. Ռափայէլի բացակայութիւնը, կը լրացնէ անոր թերին, կը խնամէ հիւանդը ու կը տեղեկանայ անկէ վարժարանի մատակարարական եւ տնտեսական հարցերուն: Ակամայ այս պատասխանատուութիւնը, թէեւ ծանր էր Ալիշանի համար, սակայն Հ. Ռափայէլի հանդէպ ունեցած պաշտամունքը՝ ծանրը կը վերածէր հեշտի: Սկզբնական շրջանին կը կարծուի թէ հիւանդութիւնը անցողական բան մը ըլլայ, բայց տեսնելով թէ բժշկին նախատեսած օրերը աւարտելէն ետք՝ չի բարւոքիր հիւանդին վիճակը, Ալիշան բնագդաբար կը զգայ թէ այդ վիճակը կրնայ շատ ու շատ երկարել: Կը սկսի սրտնեղութիւնը, մինակութեան զգացումը. շաբաթ մը առաջ մինչ երկարապատում նամակներ կը հասցնէր Վենետիկ, իրեն սիրելի դասընկեր Հ. Աբրահամ Ճարեանին, կատակելով ու զուարճանալով անոր հետ, այսօր «արկի ապա յարգելան առ սրտնեղութեան ինչ, այսինքն խօթութիւն Վ. Հ. Ռափայէլի (...) հարկ եղեւ ինձ լուի յառաջին շաբաթսութենէս»¹⁹:

Կ'անցնի առաջին ամիսը, հիւանդը դեռ գամուած է անկողին, հիւանդութիւնը «ոչ թեթեւ ինչ է, եւ երկարաբոյժ (...) կարես դուշակել թէ որպիսի՞ տաքնապք կուտեալ են ի վերայ մեր եւ յիմ առանձին, ժամանակ քննութեան մանկանց, հանդիսի մրցանակաց,

17. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 14 Յունիս 1858, առ Աբրահայր Գէորգ Հիւրմուզեան, Վենետիկ:

18. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 8 Յուլիս 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս:

19. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 19 Յուլիս 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

ուղեւորութեան հնգից մանկանց առաքելեաց այդր (ի Կ. Պոլիս), եւ անդադար եկք եւ երթք բարեկամաց»²⁰:

Վարժած էր Ալիշան հանդարտ ու խաղաղ կեանքի, թափառիլ մտքով հայրենի լեռներ ու ձորեր, հաւաքել ծանօթութիւններ, տեղադրել... չէր սպասեր նման անակնկալի մը: Եթէ կուրծքին տակ չունենար գերազանցօրէն զգայուն սիրտ մը, դուցէ նուազ կրէր ու տառապէր. ինքն ալ հիւանդին հետ կը տառապի ու չի կրնար տարբեր կերպով մտածել ու չգալ: Հիւանդն ալ իր կարգին կը զգայ իր վիճակին ծանրութիւնը ու կը յայտնէ սրտին մեծ փափաքը Ալիշանին, կանչել տալ Հոռմէն Գերպ. Եղուարդ Հիւրմիւլեանը, քաղցրախօսիկ դասընկերը, տալու համար անոր երկրի վրայ սիրոյ վերջին ողջոյնը: Ալիշան կը վարանի. յուզումի նոր առիթ մը ստեղծելով, կրնայ հիւանդին օգտակար ըլլալու տեղ՝ վնասել. «մեք ոչ դիտեմք օգո՞ւտ թէ վնաս ինչ լինիցի դալուստ սիրելոյն, եւ հարցանելոց եմք զբժիշկին»²¹:

Օգոստոս 15ին Հոռմէն Փարիզ կը ժամանէ Գերպ. Եղուարդ Հիւրմիւլեան: Ալիշան հեռագրած էր: Այնուհետեւ Հիւրմիւլեզ կը դառնայ հիւանդին պահապան հրեշտակը, երեք ամիսներ ամբողջ: Հիւրմիւլեզի ներկայութիւնը հոգեկան մխիթարութիւն մըն էր նաեւ Ալիշանի համար, որ կը թեթեւնար նիւթական մտահոգութենէ մը, աւելի եւս նուիրուելու համար վարժարանի գործերուն:

Օգոստոս 26ին հիւանդը կ'ենթարկուի վիրաբուժական գործողութեան «երկից բժշկաց խորհրդակցութեամբ ծակեալ զկողն եւ հանեալ ջուր բազում (...). այսպէս ի յիսնից աւուրց հետէ տատանիմք (...), շատ է թէ մի՛ պակասեցէ մեզ համբերութիւն»²²:

Ցաւի եւ համբերութեան, մտահոգութեան եւ համակամութեան զգացումներու մէջ, կ'ընդունի նամակ մը Վենետիկէն: Գրողը իր սիրելին է, Հ. Աբրահամ Ճարեանը, Ռափայէլեան վարժարանի տեսուչը, որ դեռ նոր ապաքինած կ'իմացնէ իր տկարութիւնը Ալիշանի: Պէտք է անոր ալ հասնիլ օգնութեան, ցոյց տալ ժպիտ մը, եղբայրական ակնարկ մը, մխիթարել հոգի մը. «մի՛ լացցուք, զի մի՛ ընդ վայր մաշեցին եւ միտք, զի հարկ է մեզ խորհել, իսկ հոգալն՝ կրկին ծանրացուցանէ զմիտս. շատ է մի ծանրութիւն»²³: Այս եղբայրակցութեան հասած էր Ալիշան իր իսկ անձին փորձով. միշտ պէտք է խորհիլ, բայց ոչ մտահոգուիլ, ապա թէ ոչ՝ կը տուժէ հասարակաց գործը. «զայս (խրատ) եւ ինձ կարեւոր դատեմ յակամայ

20. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 5 Օգոստ. 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս:

21. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 6 Օգոստ. 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

22. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 27 Օգոստ. 1858, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւլեան, Վենետիկ:

23. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 12 Հոկտ. 1858, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

իշկիւզարութիւն ըմբռնեալս, զոր եւ չկարծէի այսչափ յերկարել, յոր եւ ոչ բուռն հարկանել փափաքէի, յորմէ եւ հրաժարել փութով բաղձամ...»²⁴:

Ի՞նչ է Ալիշանի իշկիւզարութիւն կոչածը: Պահ մը թողունք հիւանդը Հիւրմիւլեզի խնամքին եւ տեսնենք Ալիշանը վարժարանի առօրեայ գործերուն վրայ, տեսնենք թէ ինչպէս խաղաղ ու հանդարտիկ, իր իսկ բառերով «յուշիկ յուշիկ» կը հասնի ամէն գործի, ցոյց տալով իր մեծ հոգին, որ դիտէ մաքառիլ կեանքի ներկայացուցած դժուարութիւններուն դէմ, մաքառելէ աւելի՝ հարցերուն տալ ճշգրիտ լուծում մը:

Շատ լաւ հասկցած էր Ալիշան թէ ինչո՞ւ Հ. Ռափայէլի նման տոկուն մէկը հասած էր այդ կարեկցելի վիճակին. «... տեսնեմ զտագնապալի եւ զտաղտկալի վիճակն (վարժարանիս), յոր յայտնաւորեալ ամաց հետէ տառապին տնտեսողք, եւ որ թերեւս մի ի պատճառաց խօթութեան է Վ. Հ. Ռափայէլի, որպէս եւ ինքն ասացեալ է, եւ բաւական ինչ է խօթացուցանել զառողջս անդամ մտօք եւ մարմնով»²⁵:

Վարժարանը ունի շուրջ քառասուն աշակերտ, գրեթէ բոլորը պոլսեցի, մեծամասնութիւնը ճրիպվարժ եւ մաս մըն ալ կիսաթոշակ: Վենետիկէն ամսէ ամիս պէտք էր հասնիլ սպասուած գումարը, օրը օրին կարենալ ապրելու համար: Քաղաքական տխուր պայմանները գլխավայր դարձուցած էին Միաբանութեան տնտեսականը. Վենետիկէն ամսէ ամիս կը հասնէր սահմանուած 4.000 Փրանքը, առանց սակայն կարենալու աւելի նպաստ մը ընել Մուրատեան վարժարանին: Կիսաթոշակ աշակերտներէն դանձելիք գումարն ալ, որ օգնութիւն մը պիտի ըլլար վարժարանին, կը հասնէր կաթիլ կաթիլ: Զարմանալի չէ, ուրեմն, որ վրայ հասնի տնտեսական տագնապը, իր հետ բերելով մտահոգութիւն, սրտնեղութիւն ու տառապանք:

Վարժարանը այս վիճակին մէջ էր, երբ Հ. Ռափայէլ կ'իյնար անկողին, ու Ալիշան կամայ կամ ակամայ կը մտնէր գործէն ներս:

Այս ընդհանուր պատկերը աչքի առջեւ ունենալով, եթէ քննելու ըլլանք վարժարանի անթիւ պէտքերը եւ կարօտութիւնները, թափանցած կ'ըլլանք մատակարար Ալիշանի հոգիէն ներս:

Վարժարանի շէնքը, թէեւ արտաքինապէս պատկառելի ու հսկայ, ներքսապէս անյարմար էր վարժարան մը ըլլալու. «յանձնութենէ եւ ի վատութենէ տեղեաց նեղիմք, եւ զօրհանապազ երկնեմք զանծինս, զէթ ըստ այսմ ժամանակի. զանյարմարութիւնս սեղանատանն ասեմ,

24. Անդ:

25. Ալիշան Հ. Ղ. Վերսայլէն, 6 Սեպտ. 1858, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւլեան, Վենետիկ:

ռու, շատ հեռու, մինչև Ս. Ղազարի «խղիկն, զոր խնդրեմ ինձ ապաստան, որպէս զգիրդինեան տակառ, եւ նա օր քան զօր հոլովեալ հեռանայ յինչն»³⁵։ Դիտէ, շատ լաւ գիտէ Ալիշան թէ վաստակելու համար եղած է Մխիթարեան, եւ հակառակ որ կը ցանկայ «անդորրութեան Ազոլոյ եւ միայնութեան Ծիեսոյ անգամ, եւս առաւել առանձնութեան սենեկի», գիտէ իսկոյն աւելցնել թէ «այլ բարի իցէ աշխատել ակամայ քան կամաւ հանգչել, զորչափ ոչ ստնանի խիղճ»³⁶։

Ահա այս է Ալիշանի փարիզեան կեանքին առաջին հինգ ամիսներու պատկերը։ Վենետիկէն Հիւրմիւլեան Աբրահայր կարգալով Ալիշանի նամակները՝ չի կրնար մնալ անզգայ. «գիտեմ, զի շատ ինչ պատճառք են ձեզ այդք վշտաց եւ տրտմութեան, եւ մորմոքի սիրտ իմ ընդ ողորմ վիճակ (...)», եւ ընդ քեզ եւս հոգամ, սիրեցեալ որդեակ, մի՛ գուցէ ի տեսիլ ողորմ եւ ցաւազին տեսարանաց վրդովեացի առողջութիւն անձինդ. վասն որոյ պատուիրեմ քեզ զգուշանալ ի կարի...»³⁷։ Հայրական յորդորին հետ հետամուտ կ'ըլլայ ընել ձեռքէն եկածը, գրել Պոլիս պատասխանատու միաբաններուն, որպէսզի փութացնեն Փարիզի վարժարանի թոշակները, ինչպէս նաեւ ինքը անձամբ մեծ խնայողութեամբ կը հաւաքէ բաւական շօշափելի գումար մը եւ կը ղրկէ Ալիշանի, իբր արտաքոյ կարգի նպաստ։ Որդեական շունչով զրուած նամակները, աղքատի նման ձեռք երկարելը, տուած էր որոշ չափով իր արդիւնքը. ժամանակի ընթացքին կը հասնի անհրաժեշտ գումար մը, կը փակուին հին պարտքերը, կը կատարուին անմիջական նորոգութիւնները։

Բոլոր այս մտահոգութիւններուն մէջ վարժարանի արտաքին բարեկարգութիւնը կ'ընթանայ կանոնաւոր. ուսումնական տարին աւարտելուն, ի յարգանս տեսուչ վարդապետին³⁸ կը յետաձգեն մրցանակաբաշխութեան հանդէսը։ Օգտուելով Գրպծ. Եղուարդ Հիւրմիւլի ներկայութենէն, Ալիշան կը հաւաքէ աշակերտութիւնը ու Սեպտեմբեր ամսոյն մէջ, 28 օրուան համար կը տանի գիւղաղնացութեան՝ դէպի Վերսայլ, որ «ճարտարութեամբ վրձնոյ նկարահանից եւ ոչ վրձնաւ քնութեան» մրցի ընդ Ազոլոյ. սակայն ազնուութիւն օգոյն կամ ազատութիւն՝ ծանուցանէ զի քաջ գիւղ է հովասուն եւ ոչ որ-

35. Անդ։

36. Ալիշան Հ. Ղ. Վերսայլէն, 7 Սեպտ. 1858, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ։

37. Հիւրմիւլեան Գէորգ Աբրահայր, Վենետիկէն, 5 Դեկտ. 1858, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ։

38. Գերպ. Եղուարդ իբրեւ հիւանդապահ կայ առ նմա, եւ մեզ դիւր ազատ ոգի կլանել եւ ի գիւղ ելանել, թէպէտեւ առաւել հոգեւոր տառապէսք վասն հիւանդին քան աշխատութեամբ եւ հսկմամբ, զոր այլք առնէին։ Յերկարել տկարութեանն ի տաքնապի կացոյց եւ զգործս մեր, զհանդէս պարզեալաշխութեան թողաք յետ դարձի ի գեղջէ, յոր հազիւ ճողպրեցաւ մանկտին»։ (Ալիշան Հ. Ղ. Վերսայլէն, 7 Սեպտ. 1858, առ Հ. Ա. ձարեան, Վենետիկ)։

պէս զբարիզ մղձուկ»³⁹։ Նոյն օրերուն Խրիմէն Վենետիկ եկած էր բազմարդիւն Հ. Վրթանէս Պուտուրեան Մխիթարեան վարդապետը, եւ դարձին կ'անցնէր Փարիզէն, ողջունելու համար իր դասընկերը՝ Հ. Ռափայէլը։ Ալիշան առիթը օգտագործելով «զաբաւ Վրթանէս բերի ի Վերսայլ, յեռանդն շրջեցաք ի դահլիճս պատկերաց, երէկ ի գործարան յախճապակեաց Սեւոյ եւ Սէն Գլուս»⁴⁰։ Ալիշան չէ՞ր զգար արդեօք որ իր կոխած հողերուն վրայ պիտի կանգնէր օր մը նոր Մուրատեան վարժարանը, որու այնքան փափաքած էր եւ գրած՝ «առ ի բարեկարգութիւն հարկ է տակաւին ոչ 10 կամ 20, այլ 100 կամ 200-000 ֆրանքաց ծախել, եւ ապա ստանալ վարժարան բարեբնակ»⁴¹։

Ութը օր Վերսայլ մնալէ ետք՝ կը թողու աշակերտութիւնը եւ կը փութայ Փարիզ, եղբայրական այցելութիւն մը տալու համար հիւանդին։ Սեպտ. 26ին գիւղաղնացութենէն կը վերադառնայ աշակերտութիւնը, եւ օգտուելով Տեսուչ Հօր մէկ առողջ վայրկեանէն, կը կազմակերպեն 1857-1858 ուսումնական տարւոյն փախման հանդէսը «նախազանգութեամբ Նուիրակին եւ ընկերակցութեամբ Պիւտէի, աթոռակալի արքեպիսկոպոսին եւ Միհրանայ (Տիւղեան) Պէյի»⁴²։ Վերջին հանդէսն էր Տեսուչ վարդապետին համար։

Նոյն տարուան Նոյեմբեր 11ին Ալիշան կը գրէ. «հիւանդս մեր չափաւոր իմն բարւոք է, թէպէտեւ չի չխեն տակաւին անկասկած ասել բոլորովին. այսքան երկար եւ յամբարոյժ եղել ախտն»⁴³։ Նոյեմբեր 6ին, Հրեշտակապետաց տօնին օրը, միասնաբար կը բարձրացնեն բաժակները, տօնական տեսուչ վարդապետին մաղթելով դեռ երկար արեւներ։ Հիւանդին վիճակը գոհացուցիչ ըլլալով, Գրպծ. Եղուարդ Հիւրմիւլ Նոյեմբեր 16ին կը դառնայ Հոռմ⁴⁴։

Վարժարանը իր կանոնաւոր ընթացքին մէջ է. Ալիշան սկսած է վարժիլ կեանքի տեսակին, այնքան որ նոյն տարուան Նոյեմբեր 20ին կը գրէ. «աւետեցից քեզ՝ գտեալ երբեմն պարապ յայլ գործոց ձեռն արկանեմ յառաջ վարել զմեծ տեղագիր Հայաստանեայց, այսինքն

39. Ալիշան Հ. Ղ. Վերսայլէն, 7 Սեպտ. 1858, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ։

40. Անդ։

41. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 21 Յուլիս 1858, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ։

42. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 26 Հոկտ. 1858, առ Աբրահայր Գէորգ Հիւրմիւլեան, Վենետիկ։

43. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 11 Նոյմբ. 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս։

44. «Գրանդի եւ արհիաշնորհ Հարազատ Վեհի (Գերպ. Եղ. Հիւրմիւլ) բարձաւ ի մէջ ի 16 ամսոյս, որ զհիւանդն եւ զմեզ մխիթարէր հոգեւոր եւ ընկերական ձեռնտուութեամբ, ընդ որ ոչ սակաւ զգամք զգրկուամ. այլ պատկառեալք ի համակամութենէ հիւանդին եւ մեք մնամք այսուհետեւ մխիթարութեան եւ սիրոյ նորին, որ եւ զազգայինս յոյժ սիրացոյց»։ (Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 20 Նոյմբ. 1858, առ Աբրահայր Գ. Հիւրմիւլեան, Վենետիկ)։

(1840-58), անցուցած էր Վենետիկի Ռափայելեան վարժարանը. Ալիշան պատրաստուած էր հոն, հոն կատարած էր դաստիարակի առաջին փորձը, ու քսանամեայ փորձառութիւնը ծառայած էր ոչ թէ միայն իր անձին համար, այլ նաեւ շահելու վստահութիւնը Միաբանութեան Հայրերուն, որոնք միաբերան կ'ուզեն իրեն յանձնել Փարիզի Մուրատեան վարժարանի տեսչութիւնը: Քսան տարիներու անցուցած կեանքին վրայ կարծէք քող մը կայ, որովհետեւ կը պակսին մեզի անմիջական տուեալներ, մինչ Փարիզի երեք տարիներու գործունէութեան շրջանը կը մատնանշէ փառաւոր եւ հասուն անցեալ մը:

Վերեւ մէջբերուած նամակներէն կը տեսնենք թէ Հիւրմիւզեան Աբրահայր քսանամեայ Ալիշանի կը յանձնէ «զդաստիարակութիւն մանկուոյն», ուրիշ երեք վարդապետներու հետ, որոնք աւելի կըրտսեր են իրմէ տարիքով: Աբրահայրը Ալիշանի ազատութեան թողած էր տնօրինել եւ բաժնել իր աջակիցներուն՝ վարժարանի զանազան պատասխանատուութիւնները, բայց «զդաստիարակութիւն» զամենակարեւոր եւ խղճալի գործ (որչափ եւ փափագեմ թօթափել յանձնէ) խղճեմ ինքնակամ թողուլ առ այլս»⁶⁷, որովհետեւ ըմբռնած էր դործին թէ՛ ծանրութիւնը եւ թէ՛ նուիրականութիւնը:

Ռափայելեան վարժարանի աշակերտութիւնը՝ որ սնած էր իր եւ Հ. Ճարեանի շունչով, տարիներու ընթացքին ստացած էր նըրբութիւն եւ սրտի ազնուութիւն, մինչ Մուրատեանի աշակերտութիւնը՝ ենթարկուած ըլլալով պատմական տխուր անցեալի մը՝ չէր ստացած պահանջուած դաստիարակութիւնը: Ահա այս տեսարանին ներկայ կ'ըլլայ Ալիշան՝ երբ ոտք կը դնէ Մուրատեան վարժարան, եւ առաջին տպաւորութիւնը կը հասցնէ Ռափայելեան վարժարանի տեսուչին՝ գրելով. «են ի մանկուսն լաւք եւ լաւագոյնք ոմանք թերեւս քան զիմ ծանուցեալսն անդ, այլ ի հասարակէն պակասի սիրտ եւ ազնիւ միտս, յորմէ կարես գուշակել զգոհարութիւն դրիցս (...), ոչինչ ապա զարմանք եթէ փախչէին աստի ուսանողքն եթէ գամ մի տեսեալ էին զՌափայելեան վարժարան»⁶⁸:

67. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 8 փետր. 1859, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

68. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 1 Յուլիս 1858ին, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ: Ալիշան վարժարանի աշակերտութեան համար կը գրէ թէ «հնարեալք եւ երթացեալք աւանդեցան քնձ աստ, թէպէտեւ պարտիմ շնորհ եւ երախտի մեծ ունել վաստակաւորացն յառաջ քան զիս եւ մանաւանդ դեռ հանգուցելոյն, որ յայնպիսոն ժամանակի երկասիրեալ եւ յայս հասուցեալ է չափ, յոր հանդարտօրէն պարապին ի վաստակ իւրեանց, թէեւ յայտնեն զթերութիւն սրտի, զոր թերեւս ընուցու առաւելութիւն ազնուաց ոմանց, որք արդարեւ միթարութիւն եւ շինութիւն են վարժարանիս» (28 Յունիւ. 1859ին, առ Հ. Ա. Ճարեան, Վենետիկ): Դիտելի է որ Ալիշան քիչ ժամանակի մէջ այնքան պիտի

Դաստիարակի մը համար զարմանք պէտք չէ ազդէ հոգեբանական դժուար կացութիւն մը, այլ յետ տեղեկանալու եղելութեան եւ դիրքերուն՝ պէտք է յաջողի գտնել անոր դարմանը: Մինչեւ նոյն շրջանը, աշակերտութեան նպաստելու համար՝ լեզուագիտութեան ասպարէզը յանձնուած էր անգլիացի եւ ֆրանսացի երկու վարժապետներու, որոնք կը բնակէին վարժարան եւ շարունակ կենցաղավարելով տղոց հետ՝ կ'օգնէին լեզուներու ուսուցումին. ժամանակի ընթացքին գրեթէ տիրապետած էին անոնք կացութեան, ստեղծելով որոշ իրաւունքներ ու պահանջներ, յաջողելով նոյնիսկ պարտադրել իրենց տեսակէտը ու կամքը տեսչութեան վրայ: Ալիշան իսկոյն կը թափանցէ խնդրին խորը, կը կարօտի ժամանակի, որպէսզի առանց վիրաւորելու ոչ մէկը եւ ոչ միւսը, տայ իւրաքանչիւրին արդար իրաւունքը, հեռացնէ զանոնք վարժարանէն ընդ միշտ, գիտնալով հանդերձ որ նոր բեռ մը կը ծանրանայ իր ուսերուն: Ալիշան բեռէն վախօղ մը չէ, բաւական է որ ապահովուի հայ մանուկին հոգեկան ու ազգային դաստիարակութիւնը⁶⁹:

Չենք գիտեր թէ ինչպէս էր Ալիշանի եւ աշակերտներու անմիջական յարաբերութիւնը, որովհետեւ կը պակսին այդ ուղղութեամբ մանրամասնութիւններ. սակայն Ալիշանի գործելակերպէն կրնանք հանել որոշ եղրակացութիւններ:

Նախ աչքէ անցնելով ուսեստեղծնի ընդհանուր ցանկը՝ կը տեսնենք թէ համեմատութեամբ չափազանց շատ է ծախսը գինիին: Ալիշան ինք իրեն եւ աջակից վարդապետներուն համար կը վկայէ թէ «... ջրով շատանալով իմ, եւ ընկերակցացս ոչ շատ ինչ (գինի) ըմպելով»⁷⁰ ճաշերու ընթացքին. ու նամակի մը մէջ կու տայ բացատրութիւնը թէ ինչո՞ւ այնքան գինի կը սպառի. աշակերտներէն ոմանց համար «աստանօր բժիշկը կարեւոր վարկանեն եւ պատուիրեն տալ գինի տկարաց եւ վտտաց, եւ են վեցեակ մի յաշակերտաց որոց տուեալ լինի ըմպելիք»⁷¹: Ալիշան գիտէ թէ տնտեսական նեղ օրերուն ծանր է հոգալ աշակերտներուն նաեւ գինին, բայց առողջութիւնը եւ տղոց բարիքը պահանջելուն՝ կը մոռնայ իր ունեցած այնքան տաքնապները, վերադասելով տղոց առողջական վիճակը:

սիրէ այս աշակերտները եւ իր սիրով դաստիարակէ զանոնք, որ անոնցմէ բաժանումը պիտի պատճառէ սրտի մեծ կսկիծ:

69. Դժուարին կացութեան մը առջեւ կը գտնուի Ալիշան, ժամանաւոր առաջի ունեւոր մանկունս որոց մեծ խէն աւելի քան զերիս ամա կեցեալ են այսպիսի օրերու յօգ. յօգուտ նոյնիս եւ ի կրթութիւն՝ արդ առաւել հաւանեալ եմ ընդ հեռանալ անգլիացւոյն, թէպէտեւ այլ լաւ է եւ գիտուն, որպէսզի ընտելացնի ի մերսն մանկունքն» (1 Յուլիս 1858ին, առ Հ. Ա. Ճարեան, Վենետիկ):

70. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 8 փետր. 1861, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

71. Անդ:

Յատուկ ուշադրություն կը դարձնե աշակերտներու առանձնական դասերուն, գլխավորաբար երաժշտութեան, որ ապագային մեծապէս կրնար ծառայել կեանքին մէջ յաջողութիւն գտնելու համար: Պոլսեցի Յովսէփ Տէր-Դաւթեանի համար գնել տուաք է 105 Ֆրանքնոց գլառնէդ մը, որ վարժարանը աւարտելուն՝ կը տանի հետը Պոլիս⁷²: Դարձեալ տնտեսապէս տխուր օրերուն չ'ուզեր դպչիլ տղոց ապագային համար օգտակար նկատուած առանձնական դասերուն, որոնց համար «ամսոյ ամսոյ 400 կամ աւելի Ֆր. հատուցանեմ ի հաշիւ մանկանց վասն առանձին վարժապետաց նոցին կամ պիտոյից, եւ զփոխանակն հազիւ ուրեմն ընդունիմ»⁷³: 1858ի շրջանաւարտ աշակերտներէն ոմանք փոխանակ դառնալու Պոլիս՝ կը մնան Փարիզ, «Գապարաճեանն մնացէ... ի կատարելութիւն վիճակար արուեստին, միւսն Այսրնեանն անցցէ յերկրագործութեան վարժարան»⁷⁴, եւ որովհետեւ շրջանաւարտ ըլլալով հանդերձ կը մնան տեսուչին պատասխանատուութեան ներքեւ՝ Ալիշան կը գուրգուրայ անոնց վերայ. «յաջողեաց մեզ եւ զմի յարդի աշակերտացս զբաշարմարն յերաժշտութիւն, զթովմասեանն առաքել յերաժշտանոցն (conservatoire) ի դասառութիւն, երիցս յեօթնեկի, յոր ճգամբ եւ պաշտպանութեամբ մտանեն փափաքողք. չառնեմք զանց զկարեւոր գգուշութեամբք, առաքելով զպատանին ընկերութեամբ հին դոնապանին, որ եւ սպասելով անդ՝ առնու ածէ ընդ իւր»⁷⁵: 1859 Օգոստոս 1ին Ալիշան կը տեղեկացնէ Աբրահամ. «վասն Այսրնեանին, որոյ աղքատ ծնողք խնդրեն զի կացցէ պատանին ի վարժարանիս եւ երթիցէ ուսանել զբժշկութիւն, յոր յօժարի եւ պատանին եւ շնորհս մեծ համարի գհաւանութիւն մեր, զոր տուաք նմա վասն զգոնութեանն եւ կարօտութեան ծնողացն»:

Արդարեւ անշան վկայութիւններ են այս ամէնը, սակայն ցոյց կու տան թէ ինչպէս Ալիշան ունի մտահոգութիւնը իւրաքանչիւր պատանիի: Նոյն այս կէտը դեռ աւելի պիտի շեշտուի յաջորդաբար, ու պիտի ամբողջանայ Ալիշանի դիմանկարը՝ որպէս դաստիարակ:

(Շար. 1)

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

72. «Պիտի պահանջել եւ 105 Ֆր. վասն գլառնէդ գործւոյ երաժշտականի զոր վասն նորա գնել հտու ըստ յանձնարարութեանն առ որդին իւր, որ եւ բերէ զայն ընդ իւր» (Ալիշան Փարիզէն, 28 Օգոստ. 1858ին, առ Հ. Բ. Մարտիրոսեան, Պոլիս):

73. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 11 Յունիս 1859, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

74. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 19 Օգոստ. 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս:

75. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 28 Հոկտ. 1860, առ Աբրահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

LE SYSTEME DE LA DECLINAISON EN ARMENIEN CLASSIQUE

(Շար. տե'ս «Բագմալէպ» 1976, Բ. 1-2, էջ 74-85)

DECLINAISONS PUREMENT DESINENTIELLES
(dites aussi «déclinaisons vocaliques», la forme du génitif se terminant par une voyelle)

DECLINAISON A GENITIF EN -ի (Type I)

I Sans thème dominant ԲԱՆ PAROLE				I bis Avec thème dominant ՔԱՂԱՔ VILLE			
	Singulier	Pluriel		Singulier	Pluriel		
Nom.	բան	th. I	բանք	քաղաք	th. I	քաղաքք	
Acc.	բան		բանս	քաղաք		քաղաքս	
Loc.	բանի		բանս	քաղաքի		քաղաքս	
Gén.	բանի	th. II	բանից	քաղաքի	th. II	քաղաքաց	
Dat.	բանի		բանից	քաղաքի		քաղաքաց	
Abl.	բանէ		բանից	քաղաքէ		քաղաքաց	
Instr.	բանիւ		բանիւք	քաղաքաւ	th. III	քաղաքաւք	

Il y a de nombreux noms qui n'existent qu'au pluriel, tels *կրօնք* «religion», gén. *կրօնից*, *փառք* «gloire», gén. *փառաց*, etc.

Le suffixe *-եայ* se décline suivant la déclinaison I: *քրիստոնեայ* «chrétien», gén. *քրիստոնէի*, instr. *քրիստոնէիւ*¹⁵.

15. On trouve d'assez bonne heure des génitifs pluriels en *-եայ* et en *-եայք* pour des noms qui semblent ne pas avoir de singulier comme